

րակ զարմացեալ եւ գովեալ զխրատն՝ վաղվաղակի կոչէր զմոզսն, եւ գրեալ զաւրբէնս մոգութեանն՝ տայր բերել ի Յայս: 17 Եւ արարեալ հրովարտակս առ ամենայն Յայոց աւագանին եւ գրէր այսպէս.-

**ԻԲ.** «Թագաւորացն առաջնոց, որ նախ քան զիս իմ նախնիքն էին եւ զայս թագաւորական գահ ունէին, ոչ գիտեմ եթէ յաղագս այլ ինչ մեծ անպարպութեան՝ եւ թէ չխորհելով զայսպիսի ծանր եւ կարեւոր պէտս՝ չհոգացան իրացս: 2 Իսկ իմ զմտաւ ածեալ, ի մոգուցն եւ յայլ իմաստուն եւ յաւագ մարդկանէ Արեաց աշխարհիս տեղեկացեալ, թէ որ միանգամ ընդ իշխանութեամբ մերոյ թագաւորութեանս<sup>1</sup> են, որպէս աւգտիւք եւ այլ հպատակութեամբ վայելեմք ի նոցանէ՝ եւս առաւել պարտիմք ընդ փրկութիւն եւ ընդ գիւտ ամենեցուն հոգւոց հոգալ եւ գտանել. եւ եթէ յանկարծ ծուլացեալ գտանիմք յայսպիսի մեծ հոգողութենէ՝ տեղեկացաք յաւրինաց մերոց, թէ ծանր պատուհաս կրելոց եմք յաստուածոցն<sup>2</sup>: 3 Արդ՝ եթէ մեք պատուհասիմք վասն չբողոքելոյ ումեք ի ձեռն՝ ձեզ առաւել աւելի եւս արժանի է երկնչել, թէ հեղգայք ինչ յիրաքանչիւր հոգւոյ աւգտէ, զի ի մենչ պատուհասիք եւ յաստուածոց: 4 Վասն որոյ եւ զաւրբէնս մեր զստոյգ եւ զարդար գրեցաք եւ տուաք բերել առ ձեզ. եւ կամիմք, եթէ որպէս դուք աւգտակար աշխարհ էք<sup>3</sup> եւ մեր սիրելի՝ զմեր արդեաւք զարդար եւ զկշիռ<sup>4</sup> արբէնս ուսանելիք եւ ունելիք, եւ չպաշտելիք զայնպիսի արբէնս<sup>5</sup>, որ ամենեցուն մեզ յայտնի են, թէ սուտ են եւ անաւգուտ: 5 Արդ՝ լուեալ ձեր զմեր հրամանսդ՝ կամաւ եւ սիրով յանձն առէք, եւ բնաւ ամենեւիմք զմիտս ընդ այլ ինչ մի՛ տանիք: 6 Այլ եւ այս կամ եղել մեզ<sup>6</sup>, զի եւ զկարծեցեալ<sup>7</sup> զձեր արբէնսդ առ մեզ գրել հրամայեցաք ձեզ, եթէ<sup>8</sup> ո՛րպէս կորուսեալ էիք մինչեւ ցայսար: 7 Եւ յորժամ դուք իբրեւ զմեզ ճանաչողք ճշմարիտ մեր արինացս լինիք՝ Վիրք եւ Աղուանք ըստ մեր եւ ձեր կամս չիշխեն ելանել»:

**ԻԳ.** Եւ ընկալեալ զայսպիսի հրովարտակ ամենայն Յայոց աւագանւոյն եւ ընթերցեալ զամենայն գրեալսն ի հրովարտակին, եւ զայն եւս իմացեալ, թէ զաւրբէնս անաւրբէնութեան իւրեանց գրով առաքէ առ նոսա, ծանուցեալ եւ զառ ի ծածուկ նետս թշնամւոյն, զոր ձգէր խորամանկութեամբ յանարատ հաւտն Քրիստոսի՝ տրտմեալ առողջախորհուրդ ժողովուրդք սուրբ հաւտին

1 Զ. թագաւորութեամբս

2 Ատ. այստեղ եւ յետոյ՝ յաստուածոց

3 ՏՏ. աշխարհի էք

4 Զ. զարդարեւ զկշիռ. թերեւս՝ զմեր արդ եւ զարդար...

5 Ատ. օրէն

6 ՏՏ. կայ մեղ եւ մեզ. Զ. կա մեղ եւ մեզ. այսպէս ուղղեցիւք ըստ Ն. Բ., Զ. ՊԱՏԿ., Գ. Տ.-Մ.

7 ՏՏ. զի զկարծեցեալ

8 Զ. գրել հրամայեցաք յորոց հրամայեցաք ձեզ եթէ